



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24939

Ա-57

ԱՆԴՐԻԵՎ

# ՄԵԿ ՈՒ ԿԵՍ ՏԱՐԻ

(ԱՐՅԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵԵՐԻ Վ-ՐԴ ՀԱՄԱԳՈՐԾ  
ՄԱՐԻՑ ՄԻՆՉԵՒ Վ-ՐԴ ՀԱՄԱԳՈՐԾԱՅՈ)



Թ. Կ. Ճ. Ի. Խ.

1923

15 JAN 2010

331.881  
U-57

Քաղաքա - ս 6 տ ե ս ա կ ա ն գ ր ա կ ա ն ո ւ ր ի ւ 6  
ՀԱՄԱՐԻՍԸՆ. ՊՐՈՊՐԵՌԻԹԻՒՆ. ԿԵՆԴՐԱՆԸՆ. ՇԵԴՐԱՎԵՆ. ԲԻՒՐ  
Պրոլետարման բոլոր երկրանդի, միացեք

300 ₣

Ար-66

ԱՀ



# ՄԵԿ ՈՒ ԿԵՍ ՏԱՐԻ

(ԱՐԵՎԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵԵՐԻ VI-ՐԴ ՀԱՄԱԳՈՒ-  
ՄԱՐԻՑ ՄԻՆՉԵՒ Վ-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱ ՐԸ)

Խ թ մ ի ս

4-րդ Տպարան Ժայ. Տնտ. Դեր. Առըշրդի, Պուշկ. գ. № 3.

1923

## ՄԵԿ ՈՒ ԿԵՍ ՏԱՐԻ

(Արհեստակցական Միութիւնների Խ-րդ համագումարից  
մինչեւ Վ-րդ համագումարը)

12163-87

Խորհրդային Ռուսաստանում արհեստակցական շարժման զարգացման մեջ բացառիկ խոշոր նշանակութիւն ուներ 1921—  
1922 թվականը: Ալդ տարին, ավելի ճիշտ է ասել, Արհեստակցական Միութիւնների Համառուսական Խ-րդ համագումարից մինչեւ 1923 թվականի Վ-րդ համագումարը տևող ժամանակամիջոցը արհեստակցական շարժման բեկման, ճգնաժամի շրջան էր:

Արհեստակցական շարժման խնդիրները, աշխատանքները ու կազմակերպութեան եղանակներն այդ ժամանակամիջոցը մեջ թարկվեցին չափազանց էական փոփոխութիւնների, փորոնք և նոր ուղղութիւն տվին արհեստակցական շարժման:

Ռուսական արհեստակցական միութիւնների վիճակագրութիւնց երկում է, որ 1921 թ. սկզբին միութիւնների անդամների թիվը շարունակ աճել է, մինչդեռ տարվա վերջում սկսել է նվազել: Այսպես, 1920 թ. վերջում և 1921 թ. առաջին կեսում արհեստակցական միութիւնների աճումը Ռուսաստանի Ս. Խ. Հանրապետութեան մեջ հասաւ իր մաքսիմումին, վոր երկում է հետեւալ աղիւսակից:

## ԱՂԻՒՍԱԿԱ

### № 1

Արհեստակցական Միութիւնների անդամների քանակը  
1920—1921 թ.

Ո Ա Յ Ո Ն Ն Ե Ր	1920 թ. Կրկորում կիսամեակ		1921 թ. առաջին կիսամեակ	
	Քանակ	% %	Քանակ	% %
Կենդար. արդիւնագործական . . . . .	1.231.129	100	1.418.052	115,19
Կենդար. արգավանդ . . . . .	802.713	100	1.007.320	125,52
Հիւսախային . . . . .	661.345	100	838.422	126,77
Արևմտեան . . . . .	321.447	100	378.048	129,62
ՄերձՎոլգեան . . . . .	880.536	100	1.050.659	119,32
Մերձուրալեան . . . . .	792.218	100	1.008.007	127,23
Մերեբ . . . . .	416.683	100	462.548	100,18
Կովկաս . . . . .	415.803	100	633.089	152,25
Ռէկրայնա . . . . .	1.124.583	100	1.343.740	119,48
Թուբքեստան . . . . .	165.483	100	198.012	119,71
Ղրիմ . . . . .	—	—	115.469	—
Հնդամենը . . . . .	6.856.940	100	8.453.362	123,28

## ԱՂԻՒՍԱԿԱ

### № 2

Վերացուցակագրութեան հետևանքները առ հունիս՝ 9 նահանգում.

Ն Ա Հ Ա Գ Ա Ե Ր	Անդամների քանակը մին- չե վերացու- ցակագրու- թիւնը		Վ. մըքքան է պա- կաս	
	Անդամների քանակը մին- չե վերացու- ցակագրու- թիւնը	Վ. մըքքան է պա- կաս	Բացար- ձակ	% %
Տվարի . . . . .	85.988	79.792	6196	92,8
Վարոնեժի . . . . .	80.121	73.561	6560	91,7
Պակովի . . . . .	67.351	45.561	21.790	67,6
Նովգորոդի . . . . .	90.898	67.082	23.816	73,8
Չերեպովեցի . . . . .	51.680	25.916	25.761	50,1
Օլոնեցի . . . . .	33.918	18.910	15.008	55,6
Կարելի Կոմմունատ . . . . .	18.237	12.814	5423	30,3
Մուրմանի . . . . .	7.898	6.044	1854	76,6
Գետրոգրադի . . . . .	474.739	254.848	219.891	53,7

Ուրիշ կերպ ասած՝ 1921 թ. առաջին կիսամեակում արհեստակցական շարժումն աճել է համարեա 25  $\frac{0}{0}$ -ով: Սակայն հետեւալ կիսամեակում այդ աճումը թվական տեսակետից արդեն ամենուրեք գաղաքառում է: Միայն Ալեքսանդրովի, Վոլինի, Օղեսայի, Կիևի, Կուբան-Զերնոմորի, լեռնականների հանրապետութեան նահանգական արհեստակցական խորհուրդները պահում են աճման նախկին տեմպը (10—30  $\frac{0}{0}$ ), իսկ մասցածները կամ մուռա են նախկին վիճակում, կամ նոյնիսկ կրճատվում են: Զերնիգովի նահանգական արհեստակցական խորհրդի կազմից մնացել է միայն կեսը, միւսները կրճատվել են 5—15  $\frac{0}{0}$ -ով: Առանձին արհեստակցական միութիւնների կենդար կոմիտեների տվեալների համաձայն, 1922 թ. ընդհանուր առմամբ կրճատվել են մի միլիոն անդամ (մոտ 15  $\frac{0}{0}$ ):

Մշակված, ստուգված վիճակագրական նիւթեր 1922 թ. համար գեռ չկան: Այդ պատճառով հնարավորութիւնը չկա վորոշել արհեստակցական միութիւնների անդամների քանակի փոփոխութեան ճիշտ պատկերը: Սակայն կրճատման հետագա տեսնեցը պարզ երեւում է 1922 թ. առաջին կիսամեակում կատարված վերացուցակագրութիւնից: Թեեւ այդ վերացուցակագրութեան տվեալներն այնքան էլ լրի չեն, բայց ևս պահանջանակ դրանք բնորոշ են այն տեսնեցը համար, զոր առաջ եկավ ուստական արհեստակցական շարժման մեջ վերջին ամիսներում, միութիւնների համաստական Վ-րդ համագումարից հետո:

Համաձայն այդ համագումարի մանդատային մասնաժողովի տվեալների, արհեստական միութիւնների անդամների թիվը հասնում էր 5.821.595-ի, վոր մասամբ հասկանալի է գարձնում վերացուցակագրութեան հետևանքներից ստացած տպավորութիւնը:

Խուսական արհեստակցական միութիւնների անդամների թիվի կրճատումը բացատրվում է մի շարք պատճառներով: Ի հարկե, անհամեմատ խոշոր պատճառը արտադրութեան կրճատումն էր, ի նկատի ունենալով վոր պետական ձեռնարկութիւնները նոր էին կազմակերպվում և բանվոր ազգաւ ձեռքերը դեռ չեին օգտագործվում մասնավոր ձեռնարկութիւնների մեջ: Այսպես օրինակ, Ա. Մ. Հ. Խ. Սիրիբի բիւրոն 1921 թ. մայիս-հունիս հաշվետվութեան մեջ մատնանշում է, թէ անդամների նվազումը բացատրվում է «առհասարակ արդիւնագործական ձեռնարկութիւնների ծառայողների և բանվորների կրճատումով»: «Իրկուտսկում շինարար բանվորների միութիւնը, պետական շինութիւնների կոմիտեի գրասեհակի փակիւրուց հետո, համարեա գաղա-

բեց գոյութիւն ունենալուց. նրա 320 անդամը ստիպված էին ցըվել նահանգում աշխատանք վորոնելու: Հարավային բիւրոն և ոյնպես ընդդում է, թե Դոնի ավազանում միութիւնից դուրս մնացին գլխավորապես գիւղացիական տարրերը»:

Ռուսական արհեստակցական շարժման թվական կրծատման և բկրորդ պատճառն այն է, վոր տնտեսական նոր քաղաքականութիւն կիրառելուց հետո, մի շարք աշխատավորներ, վորոնք սկըրում իրավունք ունեին միութեան անդամներ լինել, կորցրին այդ իրավունքը:

Տնայնագործների և մենակ աշխատողների հարցը, վոր վաղոց դրված էր արհեստակցական շարժման օրակարգում, լուծվեց վերջապես և լուծվեց այն մտքով, թե այդ կաթեգորիաները աել չունեն միութիւնների մեջ: «Անպայման չեն կարող լինել միութեան անդամներ, ասված է օրինակ Արհեստակցական Միութիւնների Վ-րդ Համառուսական Համագումարի բանաձևի մեջ, տնայնագործները, արտեխների, կոմմունաների և ընկերակցութիւնների անդամները»: Մինչդեռ սկզբում այդ աշխատավորների բավական թիվ մտնում էր միութիւնների մեջ, վորովհետեւ աշխատելով տանը, նրանք կատարում էին պետական տնտեսական մարմինների պատվերները և դուրս չեն բերում իրենց ապրանքները ընդհանուր շուկա: Հասկանալի է, վոր արտաքսելով նրանց միութիւններից, վերջիններիս կազմը պետք է կրծատվէր:

Վերջապես, դեր խաղաց և այն հանգամանքը, վոր վերացուցակգրութիւնն առաջին անգամ հնարավորութիւն տվեց ճշտորեն ստուգել միութիւնների անդամների կազմը, Մինչև վերացուցակգրութիւնը հաճախ արհեստակցական միութիւնների ցուցակներում կային այնպիսի անդամներ, վորոնք իրոք դուրս էին եկել միութիւններից, նկատի ունենալով, վոր անդամագնարների դանձումն ու անդամների կազմի ստուգութիւնը ուեալ հնարավորութիւն չեն տալիս վորոշելու անդամների թիվը: Հետեւնքում միմնոյն անդամը ցուցակգրվեց երկու քաղաքում, և այլն: Իրեւ օրինակ կարելի է բերել Օգեսսայում կատարված վերացուցակութիւնը. «Արհեստակցական կեանքը» (1922 թ. № 3) հաղորդում էր, թե մետաղագործ բանվորների միութեան անդամների թիվը վերացուցակգրութեան բոլորին թղթի վրա 6411 էր. Նրանք ենթարկվեցին ստուգման և պարզվեց, վոր 3476 հոգին մերհնարար արդեն հեռացել են, 182-ը արտաքել են և մնացել են ընդամենը 2753 հոգի: Ժողովրդական մնունդի միութիւնից մերենարար հեռացրվել էին 1384 հոգի ստուգված ընդհանուր

«0553 անդամից, առաջդրական դործի բանվորների միութիւնից հեռացել էին 56 հոգի 1140-ից, շինարար բանվորների միութիւնից—82-ը՝ 1005-ից, տեկստիլ աշխատավորների միութիւնից—61-ը՝ 535-ից, կաշեգործներից 294 հոգի լոնդանուր 1090-ից, միշտ է, մեացած միութիւնների մեջ այնպիսի «մեռած հոգիներ» չկային, բայց փաստը մնում է փաստ. վերացուցակագրութիւնից հետո միութիւնների անդամների թվական կազմի կրծատումը բացատրվում է նաև նիշով ցուցակագրութեամբ:

Ինչ էլ վոր լինի այդ տեսդենցի պատճառը, նրա լինելու փաստը չափազանց նշանակալից է ոուսական արհեստակցական շարժման համար հընթաց 1921—1922 թ.: Արհեստակցական շարժման մեջ կատարվող փոփոխութիւնները, անշուշտ, չեին կարող շանդրագառնալ նաև միութիւնների անդամների կազմի վրա:

Բայց ինչո՞ւմն էին կայանում այն փոփոխութիւնները, վորոնք տեղի ունեցան արհեստակցական շարժման խնդիրների, ձեւերի ու կազմակերպչական շինարարութեան մեթոդների մեջ և վորոնք ստեղծեցին բեկման պատկերը: Նրանք վերջնականապես ձեւակերպվեցին Արհեստակցական Միութիւնների համառուս. Կենդ. նոյն Խորհրդի 2-րդ պլենումի (1922 թ. փետրվար) վորոշումների ու տարվա սեպտեմբերի 22-ին վերջացած Համառուսական Վ-րդ Համագումարների վճիռների մեջ: Էապէս նրանք համապատասխանում են արհեստական պայմանների թեկադրած հետեւեալ հիմնական կետերին.

1. Մի կողմից պարենական մասնատումը պարենտուրը փոխարինելը, միւս կողմից արտադրութեան պետութեան միջոցով կազմակերպելու սահմանափակումը մտցրին Ռուսաստանի անտեսական կեանքի մեջ ապրանքային գործողութիւններ,՝ ինչպես և ձեռնարկներ կազմակերպելու դործի մեջ զրվեցին մասնակցութիւն ցոյց տալու վոչ-պետական (մասնավոր ու կոոպերատիվային) կապիտալ. այդ հանգամանքը իր հերթին արհեստակցական միութիւններին անհրաժեշտորեն առաջարկեց ուժեղացնելու իրենց անդամների տնտեսական շահերի պաշտպանութիւնը:

2. Ամբովզ արտադրութեան կենդրուացրած պետական կազմակերպութիւնը, ի շարս խոշոր պետական ձեռնարկութիւնների, կոոպերատիվային, կոնցեսիոն ու կապալային ձեռնարկութիւններով փոխարինելու առաջ բերեց միասնական արտադրական պարատափական ջլատում և զրկեց այն տնտեսական հենակետից, վորի

միջոցով միութիւնները ձգտում էին միասնական աշխատանքի կազմակերպչական շինարարութեան մեջ:

Յ. Այս օրից, երբ պետական ձեռնարկութիւններն անցան տնտեսական հաշվի, միութիւններն այլևս անկարող եղան անմիջական մասնակցութիւն ցոյց տալ ձեռնարկութիւնները կառավարելու մեջ, ուսիմանափակելով իրենց դերը միմիայն ժողովրդական տնտեսութեան կանոնափորող մարմիններին մասնակցելով:

Ուրիշ խոսքով՝ արհեստակցական շարժումը, բաղխվելով երկրի ժողովրդական տնտեսութեան կազմակերպութեան մեջ տեղի ունեցող խոշոր փոփոխութիւններին, անհրաժեշտորեն պետք է փոխէր թե իր քաղաքականութիւնը և թե իր տակտիկան. հարմարվելով տնտեսական նոր կացութեանը:

Բայց ինքնըստինքեան հասկանալի է, թե երկար ժողովրդական տնտեսութեան կառուցվածքի փոփոխութիւնները, վորոնք անհրաժեշտ գարձրին ու ստիպեցին փոխել միութիւնների աշխատանքի ձևերը, ինդիքներն ու կազմակերպչական շինարարութեան մեթոդները, կեանքի մէջ մտան վոչ միանգամից, այլ աստիճանաբար։ Այս պատճառով էլ այդ փոփոխութիւնների հետեանքներն արհեստակցական շարժման համար արտահայտվեցին միութիւնների գործնական աշխատանքի ընթացքում և այդպիսով արհեստակցական շարժման քաղաքականութեան ընդհանուր փոփոխութիւնը կարող էր ակներեւ դառնալ միմիայն երկարատեղ գործնական փորձառութեան հետեանքում։ 1921—1922 թիվը արհեստակցական աշխատանքի այդորինակ փորձառութեան կուտակման տարի էր՝ նոր պայմաններում։

Եթե միութիւնների 1V-րդ համագումարը դեռ հին շավզով էր ընթանում, բանի որ վոչ մի փորձառութիւն չկար, քանի որ նոր էր սկիզբ դրվել տնտեսական նոր քաղաքականութեան, 1921 թ. երկրորդ կեսից արդեն, օգոստոս ամսի մոտերին, արհեստակցական շարժման մեջ սկսվեց կուտակվել քավականին փորձառութիւն՝ միանգամայն նոր բնույթի գործնական քայլերի համար։ Այսպես, օրինակ, կոլլեկտիվ պայմանագրեր կիրառելը, երբեւ աշխատանքի պայմանները կանոնավորելու մեթոդ, Արհ. Միութ. Համառուս. Կ. Խորհուրդը վճռել էր՝ պետական ձեռնարկութիւնների համար դեռ 1921 թ. հուլիսին։ Ճիշտ է, այդ վճռը ընդհանուր նշանակութիւն չունէր, վարովեած կոլլեկտիվ պայմանագրերի գործադրութեան վճիռը տարսածվում էր պետական մի քանի ձեռնարկութիւնների վրա միայն։ Այնուամենայնիվ, նոր ուղղութեամբ առաջին քայլն արդեն արվեց 1V-րդ համագումարից

անմիջապես հետո։ Իսկ 1921 թ. նոյեմբերին Ա. Մ. Հ. Կ. Խ. արդեն հրահանգեց բոլոր արհեստակցական կազմակերպութիւններին՝ հարմարվել տնտեսական նոր փոփոխված պայմաններին։ Այդ հրահանգը վաղորոք ուղարկվեց արտադրական միութիւնների կենդրութեան կամաց քննութեան համար։ Ահա այդ հրահանգի բովանդակութիւնը.

«Կապիտալիստական տնտեսութեան վորոշ մասի վերականգնումը (մասնավոր ձեռնարկութիւններ, կապալ, կոնցենտրացիաներ, ազատ առևտուր ևայլն) և տնտեսութեան նոր ձեռքը պետական արդինագործութեան ճիշդերում՝ տնակագիտական հաշվեկատարման հիմունքներով, արհեստները և արտադրութեան մեջ մրցութիւն ստեղծելու հսարագորութիւնը, «Կառորվ» աշխատավարձի սիստեմ կիրառելը; — այդ ամենը անվայման ուժեղացնում է վարձու աշխատանքի շահագործութիւնը արտադրութեան մեջ։ Ահա թե ինչն ուներկա բացեկին է առանձին համառութեամբ առաջադրվում արհեստակցական միութիւնների առաջ անդամների շահերի պաշտպանութեան ինդիքը։

Արհ. Միութ. Համառ. Կ. Խորհրդի 11 պլենումը փետրվարին արդեն ուներ բավական փորձառութիւն, վորպեսզի ձևակերպէր հաստատան վճիններով արհեստակցական շարժման նոր ուղղութիւնը։ Վերջնական ստուգման հնթարկվեց ձեռք բերված փորձառութիւնը Արհեստակց. Միութիւնների 1V-րդ Համառուսական Համագումարում, ուր նոր ուղղութեան հիմունքները ստացան շարժման գերազոյն օրենսդիր մարմնի վճռվկան սանկցիան։

Այդպիսով, Արհեստ. Միութիւնների 1V-րդ համագումարից մինչև 1V-րդ համագումարը տեսած ամբողջ ժամանակամիջոցում դանդաղորեն վերակազմվեց արհեստակցական ամբողջ շարժումը, զանդաղորեն փոխվեցին նրա խնդիրներն ու աշխատանքի եղանակները ձեռք բերված փորձառութեան հետ զուգընթաց։ Շարժումը, նորմալ աճման փոխարեն, գտնվում էր ճգնաժամի մեջ։ Միութիւնների շարքերից վոչ պրոլետարիներին արտաքսելու և պետական ձեռնարկութիւններում աշխատավորների թիվ կրծառման հետ զուգընթաց (այդ ամենը միասին կրծառում էր արհեստակցական շարժման մասնակցողների քանակութիւնը) արհեստակցական Միութիւններն այդ ժամանակամիջոցում թևակոխում էին նոր ուղիներ։

թը անդրադարձավ առաջին հերթին միութիւնների կազմակերպչական շինարարութեան վրա։ Միութիւնների շինարարութեան հիմնական տեսնդնցը՝ պրոլետարական դեկտատուրայի երեք տարիների ընթացքում, մինչև IV-րդ Համագումարը, —վորպիսի տեսնդնցը դեռ պահել էր իր ույժը և նույնիսկ աղքաց 1V-րդ համագումարի վճիռների վրա, —սկսեց աստիճանաբար բայց վճռապես փոխարինվել ըոլորովվին նոր տեսնդնցով։

Ինչի՞ վրա էր հենվում ուռւստական արհեստակցական միութիւնների կազմակերպչական շինարարութիւնը II Համագումարից հետո։ IV-րդ Համագումարի համագումարի բանաձեռի մեջ՝ կազմակերպչական հարցի առիթով ասված է. «Համագումարի շարժման ընդհանուր ընթացքը պարզում է արհեստակցական միութիւնների կազմակերպչական զարգացման մեջ սկսված տեսնդնցը՝ ընդլայնելու արտադրական միութիւնների աշխատանքը կենդրում ու տեղերում և այդպիսով աստիճանաբար ստեղծելու միասնական միութիւն արտադրական սեկցիաներով։»

Այլ խոսքերով՝ արհեստակցական միութիւնների նահանգական խորհուրդների և նրանց գավառական բիւրոների մեջ էր կենրդունանում արհ. միութիւնների հիմնական աշխատանքը։ Աստիճանաբար, քայլ առ քայլ արհեստակցական միութիւնները, կրծատվելով թվական տեսակեալից (IV-րդ Համագումարից հետո նրանց թիվը հասաւ 21-ի), ենթարկվում էին կենրդունական միացած արհեստակցական մարմիններին։ Սկզբում, IV-րդ համագումարից հետո, միասնական միութիւն տեղեղելու տեսնդնցը բարականին ամրապնդել էր միութիւնների կազմակերպչական շինարարութեան մեջ։ Չնայած վոր այդ հարցում Արհ. Միութ. Համագում. կ. Խորհուրդը հանդես էր բերում մեծ զգուշութիւն՝ առաջարկելով 1921 թ. օգոստոսին չարգացնել միասնական միութիւն ստեղծելու արհեստական պրոցեսը և նույնիսկ վոչ մի վերակազմութեան չձեռնարկել առանց Արհ. Միութ. Համագում. կ. Խորհրդի սանկցիայի, տեղերի ընթացիկ աշխատանքը վկայում էր այդ տեսնդնցի աճման մասին։ Չնայած արհեստակցական միութիւնների համար դիմադրութեան, արհեստակցական միութիւնների նահանգական խորհուրդները սկսեցին վերածել միութիւնների նահանգական ու գավառական բաժանմունքները միջմիութիւնների ընթացքական սեկցիաների՝ օգտվելով ամենալավան առիթից։ Սյադես են վարփում մի շաբաթ նահանգական արհեստակցական խորհուրդներ (Բրեանսկի, Արխանգելսկի և այլն), վորոնք բանաձեռ են ընդունում, թե «բոլոր նախկին նահանգա-

կան բաժանմունքները վերացվում են և նրանց փոխարեն՝ նահ. արհեստ. խորհուրդներին և գավառ. արհ. բիւրոներին կից կազմակերպվում են արտադրական սեկցիաներ»։ Խորհուրդները շատ արագ խոսքից անցնում են գործի։ Այդ ուղղութեամբ վերակազմութիւնը 1921 թ. վերջին ստանում է մասսայական բնույթ։

Այդ տեսնդնցի բնորոշ պատկերը տալիս են հետևեալ վեց նահանգների տվեալները։

Բրեանսկի	Վերացան 18 ն. բաժ. մնում են 0,	վերացան 18 դ. բաժ. մնում են 0
Արխանգելի	12	7, 32
Գետրոգրադի	—	բոլորը 99
Ռեզովսկի	6	14, 37
Պակովի	6	13
Տուլայի	11	9, 40
		63

Ուրիշ խոսքերով՝ այդ 6 նահանգ. բաժանմունքների 97 ընդհանուր թվից լիկվիդացիայի ենթարկվեցին կեսից ավելին (53%/<sub>0</sub>), իսկ 323 գավառ. արհ. բաժանմունքներից դադարեցին գոյութիւն ունենալուց մոտ 280-ը։ Հազարավոր բանվորներ այդպիսով զրկվեցին իրենց արտադրական միութիւններից։

Հասկանալի է, վոր արտադրական միութիւնների նահանգական ու գավառական բաժանմունքները արտադրական սեկցիաների վերածելու գործողութիւնը չափարտվեց համագումարի ծավալով։ Միայն Բրեանսկի նահանգում ավարտվեց այդ աշխատանքը։ Իսկ մնացած բոլոր վայրերում, Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. շը ջաններում՝ միութիւնների աշխատանքի ծանրութեան կենդրունը միասնական արհեստակցական կազմակերպութիւնների մեջ փոխադրելու պրոցեսն ընթանում է բավական դանդաղ և արտադրական սեկցիաների են փոփովում միմիայն այն տեղական արհեստակցական միութիւնները, վորոնց անդամների թիվը համեմատապար աննշան է, կամ վորոնց թուլութիւնը՝ արհեստակցական աշխատավորների ու դրամական միջացների տեսակետից՝ կարելի է ապացուցել։ Եատ հաճախ նահանգական արհ. խորհուրդները վորոշակի վերցնում են մի թիվ վորից ցածր անդամների քանակը չի կարող իջնել, վորակեսղի նահ. արհ. խորհուրդը ձեական առիթ չունենա վերածելու նահանգգում կամ գավառական բաժանմունքները արտադրական սեկցիայի։ Սակայն միասնական միութեան կազմակերպութեան գործնական աշխատանքում՝ մինչև Ա. Մ. Հ. Խ. թ. 2-րդ պլենումը։

Այդ իսկ տեսնդենցը վորոշակի փոխվում է արտադրական միաց-  
նալ միութիւններն ամրապնդելու և կենդանացնելու տեսնդենցով:  
Դեռ 1922 թ. սկզբին հարց է դրվում վերականգնելու այն միու-  
թիւնները, վորոնք առաջնորդ կլանվել էին միւս միութիւններից  
ձուլման միջոցով: Այսպէս լուսավորութեան աշխատավորների միութիւնը ձուլվում է գեղարվեստի աշխատավորների միութեան  
մեջ: Դրական մտքով է լուծվում ջրագործ բանվորների և երկա-  
թուղային ծառայողների ձուլման հարցը: Միաժամանակ աշխա-  
տանք է կատարվում վերականգնելու նահանգական ու գավառա-  
կան արհ. բաժանմունքները, և Արհ. Միութ. Համառ. Կ. Խորհրդի  
երկրորդ պլենումից հետո այդ աշխատանքն ընթանում է ուժեղ  
տեմպով: Նահ. արհ. խորհուրդների հաշվետվութիւնից արդեն  
1922 թ. օգոստոսին երեսում է, թե համարեա բոլոր նահանգական  
բաժանմունքները վերականգնված են: Ընդհակառակը՝ միութիւն-  
ների միանական աշխատաը աստիճանաբար սկսում է խոսնալ:  
16 նահ. արհ. խորհուրդների տվեալները ցույց են տալիս, թե  
նկատվում է տեսնդենց կրծատելու ստորին միջմիութեան բժիշ-  
ների թիվը՝ փոխարինելով գաւառական, ույյոնական ու շրջա-  
նային տիպի կազմակերպութիւնները արհ. միութ. նահ. խոր-  
հուրդների լիազորներով:

Գավառ. արհ. բիւ-  
րոների քանակ.

Բարտուղարութիւնների  
քանակութիւնը.

Բացարձակ	%	Բացարձակ	%
Մինչև Արհ. Միութ.			
Հ. Կ. Խ. 2-րդ պլենումը	117	100	481
մնացածները . . .			100
Վերակազմութիւնից			
հետո մնացածները . . .	19	16	25
Բոլորովին վերաց- ված . . . . .	40	34	456
Թողնված Ա. Մ.			95
նահ. խորհ. լիազորները	50	43	—
Ֆունկցիաները դըր- ված են անհամեմատ ժեղ նահ. բաժանմունք- ների վրա . . . . .	8	7	—

Համառուսական արհեստակացական շարժման շինարարութիւ-  
նից՝ միանական միութեան ծրագրով՝ գեղի ուղղահայեց շի-

նարարութեան անցնելու այն տեսնդենտը պարզ ու ճշտորեն ձեա-  
կերպից Վ-րդ Համագումարի բանաձևով. «Ժողովրդական տնտե-  
սութեան ձիւղերի կազմակերպութեան զանազանակերպ ձեզ, ինչ-  
պես և գոյութեան տարրեր պայմաններում—վոմանք կախում ու-  
նեն պետական միջոցներից, վոմանք՝ շուկայի պայմաններից,—  
բնականաբար, անդրադառնում են նաև տնտեսութեան այս կամ  
այն ճիւղում աշխատող բանվորների ընդհանուր դրութեան վրա,—  
կարդում ենք մենք այդ բանաձեռում: Բոլոր վերոհիշեալ առանձ-  
նահատկութիւնները հաշվի առնելու անհրաժեշտութիւնը՝ բանվոր-  
ների տնտեսական դրութիւնը բարելաւելու նպատակով, աշխա-  
տանքի ծանրութեան կենդրոնը փոխազդում է արտադրական միու-  
թիւնների վրա: Այդ պատճառով ամրող կազմակերպչական աշ-  
խատանքը պետք է ընթանա արտադրական միութիւններ կեն-  
դանացելու և ամրապնդելու ուղիով»:

Պարզ է, վոր արհեստակացական շարժման կազմակերպչական  
աշխատանքի հիմնական տեսնդենցի փոփոխութիւնը կազմում է  
ապրած անցողական, փոփոխական ժամանակամիջոցի գլխաւոր  
բնորոշ կողմը: Բոլոր մնացած փոփոխութիւնները այդպիսով ար-  
մատական բնույթ չունեն: Բայց որպեսզի միութիւնների մեկ ու  
կես տարվա շինարարութեան պատկերը պարզ լինի, անհրաժեշտ  
է հաշվի առնել նաև այդ աշխատանքի միբանի մոմենտները:

Առաջին հերթին անհրաժեշտ է հաշվի առնել միութեան հո-  
ժարակամ անդամութեան հարցը, վոր բղխում է տնտեսական  
նոր կացութեան մեջ միութիւնների կիրառած աշխատանքի պայ-  
մաններից: Հոժարակամ անդամութեան «համակացողութիւնը՝ ա-  
սես, հակագրվում է նախկին ժամանակաշրջանի «ակամա անդա-  
մութեան», վոր չի համապատասխանում 1918—1921 թ. թ. ու-  
սական արհեստակացական շարժման ուսալ բնույթին: Սակայն  
Ռուսաստանի Ս. Թ. Հ. ամբողջ օրենադրութեան մեջ գիշ մի  
ակնարկ չկա այն մասին, թէ ստիպելով կամ դեկրետներով  
պետք է ընդունել արհեստակացական միութեան անդամ բանվոր-  
ներին, հակառակ նրանց ցանկութեան: Խոկապես բանվորն իրա-  
վունք չունէր անդամ չլինել միութեան, վորովհետեւ աստիճա-  
նաբար արհեստ. շարժման կեանքի մեջ կանոն դարձավ ավտոմա-  
տիկ կերպով ցուցակագրել ձեռնարկութիւնների բոլոր աշխատա-  
վորներին այս կամ այն միութեան մեջ, համաձայն արտադրա-  
կան առանձին միութիւնների համառուսական համագումարների  
վորոշման: Այդպիսի ցուցակագրութիւնից հետո գործադրվեց «հո-  
ժարակամ անդամութեան» սկզբունքը:

Սկզբում, հոժարակամ անդամակցութիւն գործադրվում էր իրեկ կոլլեկտիվ անդամագրութիւն։ Այս կամ այն ձեռնարկութեան աշխատավորների ընդհանուր ժողովի վորոշմամբ (համարեա միշտ միաձայն) աշխատավորները դառնում էին միութեան անդամներ, և ամեն մի բանվորի իրավունք էր տրվում դուրս գալ միութիւնից։

Հոժարակամ անդամակցութեան պայքարի հետեանքները դեռ լիովին պարզված չեն։ Սակայն տեղերից ստացված տեղեկութիւնները ցույց են տալիս, թէ այդ պայքարն անցել է բավական աջող։

Այսպէս, հանրապետութեան զանազան շրջանների 15 հանգում ստացվում է հետեւեալ պատկերը։

### Նահանգներ

### Միութեան մեջ մտածների

	%
Նիմինովգորովի	100
Սարատովի	100
Կիևի	100
Գի-Նովո-Նիկոլաևսկի	99
Դոնի ավազանի	99
Տամբովի	98
Փետրովրադի	98
Բագուի	98
Հարավ-արևել. բիւրօ (6 ն.)	98
Տուլայի	97
Տիւմենի	97
Զապորաժնի	96
Օդեսայի	96
Տվերի	94
Պակովի	94

Իրեկ կանոն, մասսաները չափազանց մասնակցում էին ակտիվ անդամագրվելու հարցի վճար մեջ։ Օրինակ, Դոնի ավազանի 1602 ձևոնարկութիւններում 131.237 բանվորից ներկա էին այդ հարցը վճռող ժողովներում 116.777-ը, կամ համարեա 90%՝ Մոսկվայում մի ամսվա ընթացքում կայացան 477 ժողով 99.839 մասնակցողի ներկայութեամբ։ Տվերում ժողովներին ներկա էին բանվորների և ծառայողների ավելի քան  $\frac{2}{3}$ -ը, Պակովում —  $\frac{3}{4}$ -ը, և այլն։ Եթե նույնիսկ ժողովներում ներկա էին վնչ բոլորը, բայց և այնպէս բացակայողները սովորաբար մտնում էին միութեան մեջ։ Տիւմենի նահանգի տվեալները պարզ ցոյց են տալիս

այդ օրինակ, բիմիկոսների ժողովում (ընդամենը 396 անդամ) ներկա էին 312 հոգի, իսկ միութեան մեջ մտան բոլորը, ժողովրդական կապի միութեան մեջ ձայնատվութեան մասնակցում էին 294 հոգի, իսկ մտան բոլորը 457 հոգին և այլն։ Ավելին, հակառակ ձայն տվողները հետագայում հայտարարութիւններ էին տալիս միութեան անդամ իրենց ևս ընդունելու մասին։

Վ-րդ Համառուսական Համագումարը ըբավականացավ հոժարակամ անդամագրութեան պայքարի աջողութիւնը արձանագրելով միայն։ Առաջին հերթին դնելով միութեան աշխատանքի աջողութիւնը, միութեան կազմակերպութեան կապի ամրապնդումը մասսայի հետ, նա կազմակերպչական հարցի մասին կայացրած իր բանաձեռի մեջ ընդգծեց, թէ անհրաժեշտ է դիմել անհատական մնացամագրութեան։ «Այն խնդիրները, —կարգում ենք մենք այդ բանաձեռի մեջ,— վորոնք դրված են միութիւնների առաջ, կարող են իրագործվել միմիայն միութեան անդամների և միութեան սերտ կապակցութեամբ։ Այդ տեսակ կապի լավագոյն ձեւանձատական անդամակցութիւնն է, վոր հարկավոր է անշեղ գործադրել կեանքի մեջ»։ Այդ վճռի իմաստը՝ ամեն մի առանձին բանվորի միութեան կեանքին մոտեցնելու մեջն է։ Ահա թե ինչու բանաձեռ ավելացնում է։ «Միութեան մեջ անդամագրելու միակ կանոնավոր եղանակ անհատական ցուցակագրութիւնը համարելով, անհրաժեշտ է ուժեղացնել ազիտացիոն աշխատանքը պրոլետարիատի հետամնաց խավերի մեջ»։

Այդ իսկ նպատակով, Արհ. Միութ. Համառուսական Կ. Խորհրդի 2-րդ Պլենումից հետո, կազմակերպչական աշխատանքի մեջ մուժված է սեկցիոն շինարարութիւն։ Այն ժամանակ, երբ հիմնական կազմակերպչական խնդիրը «միասնական միութիւն» ստեղծելն էր, վոչ միայն տարբեր արհեստների, այլև տարբեր արտադրութիւնների աշխատավորների միութիւնների մեջ սեկցիոն շինարարութիւնը վորոշակի կերպով վերանում էր։ Նա նկատվում էր իրեր փոխանցում՝ ավելի սերտ ձուլվելու համամիութեան մեջ։ Սակայն այն հանգամանքը, վոր արտադրական շահերի ընդհանուրութեամբ միացած, բայց տարբեր արտադրական ֆունկցիաներ կատարող աշխատավորների շահերը զատված էին, կղզիացած, անհրաժեշտ էր զարձնում դիմել սկսեցիոն շինարարութեան, վորպեսզի միութիւններն ավելի լավ կազմակերպեն այդ շահերի պաշտպանութիւնը։ Այդ պատճառով Արհ. Միութ. Համառ. Կ. Խորհրդի 2-րդ Պլենումը վորոշում կայացրեց, թէ ցանկալի սեկցիոն շինարարութիւնը գործադրել արտադրական հիմունքով։

Օրինակ, լուսավորութեան աշխատավորների միութեան մեջ կազմեց մամուլի աշխատավորների սեկցիա, գեղարվեստի աշխատավորների միութեան մեջ—ֆոտո-կինո աշխատավորների սեկցիա: Վ-ըդ Համագումարը կազմակերպչական շինարարութեան այդօրինակ ուղղութիւնը գտավ կանոնավոր, մուծելով բանաձեռի մեջ հետեւալը, թէ «մասսաների հետ ավելի լավ կապ պահպանելու համար նպատակահարմար է ստեղծել արտադրութեան այն ճիշդերի արտադրական սեկցիաներ, վորոնք զատված են, կղղիացած հիմնական արտադրութիւնից»:

Կերջապես ուսւական արհեստական շարժման կազմակերպչական խնդիրը սպառելու համար, ինչպես նաև ձեւակերպվեց գլխավոր գծերով մեկու կես տարվա ժամանակաշրջանում, հարկավոր է կանդ առնել արհեստ. շարժման փինանսների վրա:

Պետք է ասել, թե միութեան աշխատանքի պայմանները ռազմական կոմմունիզմը ժամանակաշրջանում, այն խնդիրների բնույթը, վորոնցով զբաղվում էին այդ ժամանակաշրջանում արհեստ. միութիւնները, ինչպես և ընդհանուր անտեսական կացութիւնը, մասսամբ հետ մզեցին անդամավճարը՝ իրեն արհ. շարժման փինանսական հիմք: Դրամական աշխատավարձը վոչնչացնելու և պարենավորման ամբողջ գործը պետական մարմինների տնտերենութեան տակ կենտրոնացնելու ժամանակ, հասկանալի է, վոր խոսք լինել չեր կարող այն մասին, թե միութիւնները կարող են գոյութիւն ունենալ սոսկ աշխատավարձի հաշվին: Ի նկատի ունենալով, վոր միութիւնները զբաղվում էին պրոլետարիատի ընդհանուր դասակարգային այնպիսի խնդիրներով, որոնք խորհրդային թուսաստանում գարձան ընդհանուր պետական խնդիրներ, արհ. շարժման համար միջոցների բնական աղբիւրը հանդիսացան պետական սեսուրները:

Սակայն երբ այդ ժամանակամիջոցում հանրապետութեան անտեսական կենաքը վոտք զրեց անտեսական նոր քաղաքականութեան ձևապարհի վրա, իրերի այդ դրութիւնը չի կարող մնալ: Մի կողմից միութիւնների աշխատանքը կանոնավորելու և ուժեղացնելու համար անհրաժեշտ էին միջոցներ, իսկ այդպիսի միջոցների ի հարկե, հանդիսանում են միայն անդամավճարներից ստացվող գումարները: Միւս կողմից-միութիւնների հարկավոր կապը միութիւնների անդամների հետ՝ պահանջում էր միութեան ամեն մի անդամից՝ շահագրգոված լինել փինանսապես իր միութեան գոյութեան մեջ: Ըստ սմին, անտեսական նոր քաղաքականութեան և պետական բիւջեի կրնաւաման հետ դուզմնից

դադարեցին նաև այն եկամուտները, վոր սկզբում մտնում էին միութեան գրամարկը պետականից: Դեռ մինչև Արհ. Միութ. Համառ. կ. Խորհրդի երկրորդ Պլենումը՝ արհեստակցական շարժման առաջ սուր կերպով դրված էր միութիւնների փինանսները կանոնավորելու հարցը: Մի շաբթ հրահանգամակներով Արհ. Միութ. Համառ. կ. Խորհրդում ընդուռում էր, թէ արհեստակցական կազմակերպութիւնների հիմնակետը—անդամավճարներն են, վոր ստանալու են միութիւնների բարձր մարմինները, ևայլն:

Այդ ժամանակամիջոցում միութիւնները կարողացան իրադործել անդամավճարների հարցն ամբողջովին ձիշտ է, գեռ մինչև այժմ փինանսական նոր հետակետը այնքան էլ ամուր չէ: Մինչև այժմ նահանգական բաժանմունքները կանոնավոր հաշվի չեն ներկայացնում միութիւնների վարչութիւններին: Բայց այդ ուղղութեամբ գործը հարթվում է, ինչպէս ցոյց է տալիս հետեւակաղիւսակը.

Կենդր. վարչութիւններ	Այն նահ. բաժ. թիվը, վորոնք ուղարկել են ամսավճարները						Նահ. բաժ. միացելու վարչութիւնները	Նրանցից ուղարկել են ամսավճարները	Ամսավճարների պահպանը
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս			
1. Սետեղագոծներ	4	5	7	7	14	14	76	32	42,0
2. Շինարար բանվորներ	1	—	2	5	10	10	86	19	22,1
3. Փայտագործ	—	—	—	4	9	19	70	28	40,0
4. Քեմիկաներ	4	9	4	13	17	14	68	53	77,9
5. Կար անողներ	—	—	1	3	7	8	65	12	18,5
6. Տպագր. գործիք բանվ.	—	—	3	4	3	8	88	13	14,9
7. Խոր. աշխատավորներ	2	—	3	6	17	30	89	60	67,4
8. Բժշ. սանիթ. աշխ.	2	1	1	3	12	18	89	27	30,9
9. Կոմ. տնտես.	—	1	1	3	12	10	89	19	21,3
10. Ժող. անդամ բանվ.	—	—	—	3	1	2	68	4	5,9

Ամփոփենք: Մեկ ու կես տարվա ընթացքում Խորհրդային Հանրապետութեան մեջ ստեղծված տնտեսական նոր կացութիւնը

կազմակերպչական տեսակետից՝ անհրաժեշտութիւն ստեղծեց մի կողմից՝ ամրապնդել արտադրական միութիւնները, միւս կողմից՝ ուժեղացնել միութիւնների ու անդամների փոխադարձ կապը։ Մի շաբք կազմակերպչական բարենորդումները, վորոնք արգեն գործադրվել են կամ պետք է գործադրվեն (կամավոր անդամակցութիւն, սննատական անդամադրութիւն, սեկցիոն շինարարութիւն, ֆինանսական հետակատի զարգացում) վերակազմել են արհեստական շարժումն այնպէս, վոր այդ կապը անպայման ամրապնդվեց ու զարգացավ։

## III

Առանձնապէս խոշոր էին այն ազգակները, վորոնք տեղի ունեցան վերոհիշեալ ժամանակամիջոցում սուսական արհեստակցական շարժման մեջ՝ աշխատավարձի քաղաքականութեան ու գործադարձութեան վերաբերմամբ։

Տարիքային հին քաղաքականութեան բնկումը, վոր ձգտում էր սահմանել հաստատում տարիի, հիմնված սոցիալական հավասար ազանութեան վրա՝ միերարամինների օգնութեամբ, սկսվել էր դեռ մինչև Միութիւնների IV-րդ Համագումարը, Արդեն 1920 թ. փերջին և 1921 թ. սկզբին արհեստակցական շարժման առաջ, ձեռնարկութիւններում աշխատանքի արժադրութեան անկման հետեանքով, ինդիր էր դրված անցնել սոցիալական հավասար ազանութեան միութիւններից՝ աշխատավորի արտադրականութեան ու նրա աշխատավարձի միջև սերտ կտպ ստեղծելու միթողների։

Այդ ինդիրը լուծվում էր կոլլեկտիվ պարենավորման միջոցով և նոյնիսկ IV-րդ Համագումարը մոտեցաւ նրան զգուշորեն և մատնանշեց, թե կոլլեկտիվ պարենավորման փորձ կարելի է անել միայն միքանի ձեռնարկութիւններում (1921 թ. նոյնիսկ Սշխատանքի և Ինքնապաշտպանութեան Խորհուրդը կոլլեկտիվ պարենավորում մացրեց 39 խոշոր ձեռնարկութեան մեջ)։ Փորձը երհաց ածող և, չնայած այն վորոշման, թե մինչև նոր բերքը պետք է բավուկանանալ այդ փորձով, տեղական մարմիններն սկսեցին գործադրել կոլլեկտիվ պարենավորումը։ Իսկ նրանից հետո երբ պարզվեցին Հանրապետութեան պարենական հեռանկարները, կոլլեկտիվ պարենավորման անցած ձեռնարկութիւնների թիվը սկսեց արագորեն աճել։ Արդեն 1921 թ. նոյնեմբերին կոլլեկտիվ պարենավորման մեջ էին 92 ձեռնարկութիւն (նույն-

սի 39-ի հետ միասին), գեկտեմբերին—94, (387 հազար բանվոր), 1922 թ. հունվարին—92, (392 հազար բանվոր), փետրվարին—97 (489 հազար բանվոր)։ Հոկտեմբերի 1—15 կոլլեկտիվ պարենավորման ենթարկվեցին նաև խորհրդային ծառայողները։ Այդպիսով կոլլեկտիվ պարենավորման շրջանը բավականին ընդլայնվեց ու դրա հետեանք եղավ ծառայողների թվի կը բառումը, մնացած ծառայողների աշխատավարձի ավելացումը՝ ի հաշիվ կրծատվածների, և արտադրութեան համապատասխան աճումը։

Սակայն կոլլեկտիվ պարենավորումը նոյնիսկ բիւջետային— սկզբանական հատով, կտրով սիստեմի հետազայ ձեռվ— հետագում էր առաջվա նման աշխատավարձի պետական ֆոնդի վրա և, հետեարար, ժողովրդական տնտեսութիւնը կատարվելու էր պետութեան ձեռքով միայն։ Այսինքն, աշխատավարձի ամրող գումարը, պետութեան ուեալ սեսուրսների հիման վրա, կենդրուական ֆոնդային վարչութիւնը բաժանում է պետութեան տնտեսական ծրագրի համեմատ այնպիս, վորպեսզի ամեն մի ձեռնարկութիւն, ունենալով իր ֆոնդը, վճարի իր բանվորների ոռոճիկութիւնը տարբիֆային ցանցով, նայած բանվորների քանակին, վորոնք կատարում են արտադրական ծրագրի ամրող 100 % -ը։ Այդ կարգը պահանջում էր մի շաբք ուղղութեանը, վոր և մատնանշեց Արք. Միութ. Համառ. Կ. Խորհրդի 1-ին Պլենումը (1921 թ. նոկտեմբերին)։ Իսկ հետո, 1922 թ. հունվարին, պարենական հեռանկարների վատթարացման հետ զուգընթաց, երբ սկսվեց աշխատավարձի անկման շրջանը (չնայած պետական հաշվով ուստողների թվի կրծատման), մի շաբք գավառաշրջաններ ընդորկած սովոր հետ զուգընթաց պարենական պակասորդը դրամանիշներով ծածկելու, պետական ձեռնարկութիւնների մեծ մասի մեջ անտեսական հաշիվ գործադրելու և այլ ընդհանուր տնտեսական պառանձների հետ զուգընթաց, արհետու շարժումը վերջնականապիս անցնում է պարենավորման քաղաքականութիւնից աշխատավարձի դրամական և կոլլեկտիվ պայմանագրի սիստեմին, իրբե աշխատանքի վարձատրութիւնը կանոնավորող միջոցի։

Դեռ 1921 թ. նույնի 14-ին Արք. Միութ. Հ. Կ. Խորհուրդը վորոշեց փորձի համար կոլլեկտիվ պայմանագրեր գործադրել միքանի պետական խոշոր ձեռնարկութիւնների մեջ։ Նոյեմբերի 5-ին նա հաստատեց փայտագործ բանվորների միութեան և Հիւմանային անտառային բնկի, միջև կապված կոլլեկտիվ պայմանութիրը, կոլլեկտիվ պայմանագրեր կնքելը դժգարանում էր ձեռ-

Նարկութիւնների բիւջեների բացակայութեան և նրանց ծանր դրութեան պատճառով մինչև մայիս ամիսը, չնայած, վոր Արք. Միութ. Հ. Կ. Խորհրդի 2-րդ Պլենումը վորոշակի մատնանշել էր, թե աշխատավարձը պետք է կանոնավորել վնչ միայն մասնավոր, այլ և պետական ձեռնարկութիւններում՝ կոլեկտիվ պայմանագրեր կապելով; Միայն 1922 թ. մայիսից սկսվում է կոլեկտիվ պայմանագրերի պայքարը, վոր այդ ժամանակամիջոցում կազմում է միութիւնների ակտիվ գործունեութեան անհամեմատ խոր կողմը:

Միութիւնների տարիֆային աշխատանքի ընդհանուր պատկերը կարելի է դատել 1922 թ. առաջին կիսամեակի աշխատավարձի փոփոխութեան տվեալներից՝ նախապատերազմեան ուղղիներով; Ահա այդ պատկերը.

#### Հունվ. Փետր. Մարտ. Ապրիլ. Մայիս. Հունիս. Հուլիս

Արդիւնաբերութիւն	3,97	3,54	3,16	4,04	3,91	6,93	7,38
Երկաթուղի	3,81	3,84	3,89	4,04	4,85	6,10	6,92
Խ. ծառ. և ժողկոմատն.	3,77	3,11	3,30	2,78	3,85	4,65	4,72
Միջին հաշվով	3,84	3,33	3,44	3,59	4,67	5,30	6,22

Աշխատավարձի համեմատական տատանումները ցույց տալիս թե ազրիւ-մայիսից աշխատավարձը շարունակ ավելանում է.

#### Հունվ. Փետր. Մարտ. Ապրիլ. Մայիս. Հունիս. Հուլիս

Արդիւնագործութիւն	100,0	80,2	79,6	101,8	148,9	174,6	185,9
Երկաթուղի	100,0	87,9	102,1	106,0	127,3	160,1	181,6
Խ. ծառ. և ժողկոմատն.	100,0	83,8	88,9	74,9	95,7	120,7	125,2
Միջին հաշվով	100,0	86,7	89,6	93,5	121,6	151,0	162,0

Աշխատավարձի գումարը գրամական սիստեմ կիրառելու ընդհանուր տեսդեսց սկսում է պարզուեն երևալ մայիս-հունիսից՝ Մարտին պարենը կազմում էր ընդհանուր Փոնդի  $33^0/_{\text{o}}$ -ը, ապրիլին  $-49^0/_{\text{o}}$ , մայիսի  $68^0/_{\text{o}}$ , հունիսին  $-34^0/_{\text{o}}$ , հուլիսին  $-20^0/_{\text{o}}$ , օգոստոսին  $-15^0/_{\text{o}}$ :

Պայմանագրական հարաբերութիւններով միութիւնները բավականին բարձրացրին աշխատավարձը այն պարտադիր մինիմումի հետ համեմատած, վոր առամօնում է ամեն ամսի համար Տարիֆային Բարձր Խորհուրդը: Օրինակի համար բերենք միութիւններից միքանիսի բնորոշ ու տիպիկ տվեալները.

Տարիֆային ռոճիկները՝ 1922 թ. մայիսին խոշոր տրեստների և ուրիշ տնտեսական հաստատութիւնների հետ կապած պայմանագրերի համաձայն (ռուբլիներով):

Արհեստակցական Միութիւն և պայմանագրեր կապած տնտեսական կամ մարմնի անունը:	Պարագաների առանձին գումարը (ռուբլիներով)	Տարիֆային ռոճիկը ռուբլիներով, պայմանագրերի տառաջին ամսում:	
		1 կարգ	6 կարգ
<b>ՏԵԿՈՒՏԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ</b>			
1. Պրեսնենի բամբակագործ տրեստ	3	2754	4254
2. Ժապավենի արտադր. տրեստ	3	3993	7064
3. Տեխնիկական-գործվածքների	3	2070	4140
4. յեարոսլավի քաթանի տրեստ	1	1445	2890
5. Սիրիրի մանուդի տրեստ	3	1651	2801
<b>ՓԱՅՏԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ</b>			
1. Ֆաների տրեստ	3	3213	6426
2. Պետ. անտառ. գործի տրեստ	3	2856	5712
<b>ՔԻՄԻԿՈՍՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ</b>			
1. Ակց. ցեմ. Տոմ. ընկ.	3	1372	3842
2. Բոնդեժ. երկ. միութիւն	6	1524	4267
<b>ՇԱՔԱՐԻ ԱՐՏ. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ</b>			
1. Շաքարի արեստ *	3	2048	4096

\* Ռոճիկները հաշվում են շաքարի միջակ գներով:

Տարիքային սոճիկները՝ 1922 թ. հուլիսին խոշոր տրեստների և տնտեսական հաստատութիւնների հետ կապված պայմանագրերի համաձայն (սուբլիներով)։

Արհ. Միութեան և պայմանագրերի կապած տնտեսական մարմի անունը:	Պայմանագրի ժամանակաշրջանը (ամիսներում):	Տարիքային սոճիկը սուբլիներով, պայմանագրի 1-ին ամսում:	
		1 կարգ	6 կարգ
<b>ՄԵՏԱԳԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ</b>			
1. Պողպատի գործի Հար. տրեստ	1	1694	3324
2. Մետաղ. գլխավոր վարչութիւն*)	1	2184	4374
3. Գոմզա	2	1572-2163	3146-4326
<b>ՏԵԿՍՏԻԼ. ԲԱՆՎ. ՄԻՈՒԹԻՒՆ</b>			
1. Մետաքսագործ. վարչութիւն		2718	4218
<b>ՔԻՄԻԿԱՑՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ</b>			
1. Ռեզինի տրեստ	6	2958	8282
2. Ներկ-լակի տրեստ	3	2545	7124
<b>ԽՈՇՀՐԴԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ</b>			
1. Ժող. Տնտ. Բարձր Խորհուրդ	3	1856	3712
2. Պետական Բանկ.	3	3500	7000

\*) Առճիկները հաշվում են եարկով ք. գներով։

Աշխատավարձի այդ ավելացումը ամեն մի առանձին դեպքում, ի նկատի ունենալով տվեալ ձեռնարկութեան կամ ձեռնարկութիւնների միութեան (տրեստ) միջոցները, խախտում էր կենդրուական ֆոնդային վարչութեան և Տարիքային Բարձր Խորհրդի քաղաքականութեամբ գործադրվող այն սկզբունքը, վորի համաձայն արդիւնագործութիւնը բաժանվում էր ըստ խմբակների՝ ծանր հիմնական ինդուստրիան ամրապնդելու նպատակով։ Բայց դա բղխում էր արդիւնագործութեան առանձին ճիւղերի կեանքի այն խայտարդեա պայմաններից, վորոնք ներկայում դասավորվում են վոչ հոգուտ ծանր ինդուստրիայի, վորովհետեւ նրա մթերքների սպառողներ հանդիսանում են համարեա բացառապես միւս պետական մարմինները, վորոնք իրենք արդեն չափազանց կարիք ունեն շրջանագարձ գումարների, մինչեւ արդիւնագործութեան այն ճիւղերը, վորոնք իրենց մթերքները սպառում են մասնավոր շուկայում, ունեն համեմատարաք մեծ գումարներ և հարավորութիւն՝ բարձրացնելու նաև աշխատավարձը։ Դրանով են բացատրվում ինչպէս զանազան կոլեկտիվ պայմանագրերով սահմանվող բավական խոշոր տատանումները աշխատավարձի նորմաների մեջ, նոյնպես և այն երեսութք, վոր զանազան խմբակների համար Տ. Բ. Խ. ասհմանած սոճիկները միանգամայն չեն համապատասխանում այն սոճիկներին, վորոնք իրապես գոյութիւն ունեն այդ խմբակներում պայմանագրական համաձայնութիւնների հիման վրա։

Ըստ սմին անհրաժեշտ է ընդգծել, թե մայիս ամսից, երր Արհ. Միութ.-Համառ. Կ. Խորհուրդը հրահանգեց կիրառելու պայմանագրական հարարերութիւնների սիստեմ, ժողովրդական անտեսութեան բոլոր ճիւղերում, վորոնք թեև տակալին մնում են պետական պարենավորման հնթակա, սկսում են մեծ ուշադրութիւն դարձնել մեր հիմնական ինդուստրիայի վրա։ Համապատասխան արհեստական միութիւնները, ձգտելով համախմբված պահել ինդուստրիալ պրոլետարիատին, ստիպված են լինում, կոլլեկտիվ պայմանագրեր կապելու ժամանակահանդել ավելացնել աշխատավարձի նորմաները, համեմատած սահմանված մինիմումի հետ։ Հաճախ այս կամ այն արդիւնագործութիւնը, անկարող լինելով, միջոցների բացակայութեան պահանջով, բավարարել միութիւնների այդորինակ պահանջը, ստիպված է լինում դիմել պետական միջնորդ դատարանի օգնութեան, վորն իր կողմից համապատասխան մարմինների ուշադրութիւնն էր հրավիրում արդիւնագործութեան այդ ճիւղի կարիքների վրա։

Այդ խնդիրը գեռ պահանջում է մեծ աշխատանք, վորովճեան դրութիւնը շատ ծանր է: Օրինակի համար կը բերենք մի քանի թվեր:

Դոնի աղավանը, վոր աստիճանաբար կորցնում է մեծ թվով բանվոր (ներկայումս ունի 7000, նորմալ 15.000—ի փոխարեն), անկարող է վճարել իր բանվորներին ոռոճիկ 30%—ից ավելի այն ոռճիկից, վոր տալիս է մանդի արդինագործութիւնը: Միևնույն Դոնի ավագանում՝ 1-ին կարգի մետաղագործը ստանում է և նախապատերազմեա 4,99 և 4,03 ոռոճի, քիմիկուր—3,82, մինչդեռ հանքագործը՝ միայն 2,78 ռ. և Դոնի նահ. բաժանմունքը հումիսին վճռում է ընդամենը 3,33 ռ. պահանջ դնել: Միւս խմբակեների հետ համեմատելով՝ տարբերութիւնն ավելի խիստ է: Երկու կոլեկտիվ պայմանագրերով հանքագործ բանվորները կարողացան բարձրացնել ոռճիկները մինչեւ 6,10 և 5,36 ռ., բայց Դոնի ավագանի հիմնական բանվորութիւնը գտնվում էր նախկին վիճակում մինչեւ հոկտեմբեր, երբ ստորագրվեց ընդհանուր պայմանագիր առհասարակ Դոնի ավագանի քարածուխային արդինագործութեան համար, վորով և սահմանվեց աշխատավարձ 1922 թ. գրամանիշներով երկու անդամ ավելի, քան առաջ էր, և 6 ժամեա բանվորական օր գետնի տակ աշխատազների համար:

Սննորմալ է նաև, երբ միևնույն բաղադրում կոմմունալ ձեռնարկութիւնների բանվորն ստանում է 100—200%—ով ավելի ոռճիկ՝ երկաթուղային բանվորից:

Այդ անարդարութիւնը կազմակերպում է պետութեան համար անհամեմատ արժեքաւոր ձեռնարկութիւնների բանվորական ույժը: Դրանից, ի հարկէ, չի հետևում, թե անհամեշշու է հավասարեցնել լավ վարձարարող խմբակները վատ վարձարարող խմբակների հետ: Վ-րդ Համագումարի վորոշումների մեջ իրերի աննորմալ դրութեան գեմ անհամեշշու պայքար մզելու համար մատնաշփած է հետեւալ ցուցմունքը.

«Անհրաժեշտ հանաչելով աշխատավարձի կարգագորումը, — կարում ենք արհեստական շարժման հեռանկարների մասին ընդունված բանաձնեի մեջ, — խոշոր ու ծանր ինդուստրիալի և երկաթուղու բանվորների աշխատավարձն ավելացնելու համար արհեստական միութիւնները չպետք է իջեցնեն արդինագործութեան ձիւղերի նպաստագոր կացութեան մեջ մնացած բանվորների ոռճիկները, այլ պետք է աղջեն արտադրութեան միջոցների կանոնագոր բաշխման վրա, պաշտպանելով անհամեմատ նպաստավար պայմանները արդինագործութեան ու անտեսութեան

այն ձիւղերի համար, որոնց մեջ գոյութիւն ունեն աշխատավարձի անհամեմատ աննպաստ պայմաններ»:

Ոյդպիսով մեկ ու կես տարվա ընթացքում ոռւսական արհեստական շարժումը աշխատավարձի իր քաղաքականութեան ու գործադրութեան մեջ հաստատում տարիվներից անցավ պարտադիր մինիմումի, որ սահմանում են պետական իշխանութեան մարմինները միութիւնների օգնութեամբ, ինչպէս և կոլեկտիվ պայմանագրերի քաղաքականութեան, վորոնք վորոշում են աշխատավարձը զուտ դրամական ձեռվ:

## IV

Արհեստական քաղաքականութեան նոր ուղղութիւնը, վորպիսին ձևակերպվեց մեկ ու կես տարվա ընթացքում, առաջ է մղում արհեստական միութիւնների հիմնական ինդիրների թվում բանվորների տնտեսական շահերի պաշտպանութիւնը: Այն պայմաններում, վորոնց մեջ այս տեսակետից գտնվում էին միութիւնները երեքամեսա իմպերիալիստական սպանդանոցի ու չորսամեսա քաղաքացիական կովի հատեանքով, այդ ինդիրը չափազանց բարձր է և կարող է միջագեպեր առաջ բերել միութեան անդամների և ձեռնարկութիւնների վարչութեան միջն:

Մասնագորապես, դժգոհութեան ամենաեական պատճառներից մեկը՝ ձեռնարկութիւնների պարտքերն են: Վորքան էլ ցածր է պարտադիր մինիմումով սահմանված աշխատավարձը, նոյնիսկ այդ աշխատավարձը, գումարները իր ժամանակին չստացվելու և այլ պատճառներով, միշտ չեն կարողանում վճարել այն պետական ձեռնարկութիւնները, վորոնք նոր են ոկտում կազմակերպվել նոր հիմունքներով: Այդ ժամանակաշրջանում, առանձնապես տընտեսական նոր քաղաքականութեան առաջին ամիսներում աշխատավարձի պարտքերը հասան 50 արթիսն ոռութ: 1922 թ. հունվարից մինչեւ հունիս հազիր վճարվեց այդ պարտքերի մի երրորդը: Այսպես, պարտքերը կազմում են (միլիոն ոռութիւններով) արդիւնագործութիւն 12.801,8, վորից վճարվեց 43,9%:

Երկաթուղի	—	14.055,4, վճ. 28,5%
Ժողկոմատներ	—	21.581,1, վճ. 37,9%
Մնացածները	—	1.905,7, վճ. 38,0%
	—————	—————
Ընդամենը	—	50.344,1 — 36,7%

Միջագեպեր ու վեճեր հարուցանող միութեան պատճառն այն է, վոր աշխատավարձը հետ է մնում ուսալ ապրուստի մինիմումից: Նոյնիսկ միութիւնների Վ-րդ Համագումարը, հաշվի

առնելով ընդհանուր տնտեսական կացութիւնը, նախազգուշացրեց արհեստակցական կաղմակերպութիւններին՝ չփորձել հասցնելու մոտիկ ժամանակամիջոցում աշխատավարձի չափերը նախապատերազմեան ապրուստի մինիմումի մակարդակին։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, թե երբեմն անբավարար աշխատավարձի հոգի վրա ծագում են միջազեղեր։

Աւ եթե քննենք այս պատճառները, վորոնցից ծագում են միջադեպեր, կը տեսնենք, վոր գործադուլների ձնշող մեծամասնութիւնը՝ աշխատավարձը իր ժամանակին չվճարելու կամ նրա շափի հարցերի շուրջը տեղի ունեցող տարածայնութիւնների հետևանքը է:

Սառուկ բերվող աղիւսակը վոչ մի կասկած չի թողնում դրանում.

ՆԱՀԱՆԳԻՆԻ		ԴՐՈԺՄԱՆԻՆԻ		ՄԱՆԱԼՅՈՂՆԻՆԻ		ԳՈՐԾԱՊՈՂՆԵՐԻ թիվը ըստ պատճառների.	
Մոռկալայի	26	17.858	11	10	1	1	2
Պետրոզբաղի	13	5641	7	4	—	—	—
Իվան.-Վոզնես.	14	2535	12	—	2	—	—
Մհացածները	47	13.281	31	8	3	—	4
Ընդամենը	100	39.315	61	22	6	4	6

Այդպիսով, զործագույների 61%՝ը ծագեց աշխատավարձն ուշացնելու պատճառով, 22%՝ը՝ նրա չափի դեմ եղած գժկոհութիւնից և 6%՝ը՝ այդ երկու միացեալ պատճառներից։ Այլ կերպ ասած՝ Եթե չինէին այդ թերութիւնները, գործադուլների 89%՝ը երբեք չէին ծագիլ։

Սակայն Հանրապետութեան անտեսական զրութեան պատճառով անհաղթելի ու այդ աստիճան հիմնական պատճառների մեջ անգամ գործադուլային շարժումը զարգանում է չափազանց թույլ՝ 1922 թ. առաջին կիսամեակում տեղեկութիւններ կան հետեւալ գործադուլների մասին.

ՄԻՋԻԹԻՒՆՆԵՐ	ԳԱՐԺԱՊՈՂՆՆԵՐ	0/0	ԳԱՐԺԱՊՈՂՆՆԵՐ	0/0	Մահակցողներ	0/0
1	2	3	4	5	6	
Խսդուստրիալ Միութիւններ, վորոնց թվում՝	120	82,8	113	48.151	89,3	
Մետաղագործներ	30	20,7	25	10.055	18,6	
Հանքագործներ	19	13,1	18	7006	13,0	
Տեկստիլ բանվորներ	17	11,7	17	20.853	38,7	
Փայտագործներ	27	18,6	27	4017	7,4	
Ժող. մննդի բար. բանվ.	8	5,5	8	2120	4,0	
Մնացած միութիւնները	25	17,2	24	5766	10,7	
Վորոնց թվում՝ Տեղական երկաթուղի	5	3,4	5	1341	2,5	
Ժող. կապի աշխատավորներ	2	1,4	2	1000	1,9	
Լուսավորութ. աշխատ.	5	3,4	4	1265	2,3	
Ընդամենը	145	100,0	137	53.917	100,0	

Այդ թվերը—145 գործադուլ 53.917 մասնակցողներով—մեկ ու կես տարվա ընթացքում, հազիւ թե գերազանցում են 1921 թ. գարնան ու ամառվա գործադուլային շարժման թվերից <sup>\*)</sup> և, համեմայն գեպս, շատ ավելի պակաս են վորոնե երկրի համապատասխան թվերից: Գործադուլային շարժման համեմատաբար թոյլ զարգացումը բացատրվում է այն իրողութեամբ, վոր միութիւնները, միջադեպ ծագելու ռուպեին, միանգամից ակտիվ մասնակցութիւն են ցույց տալիս միջադեպին և մեծ մասամբ հարթում են այն: Իսկապես, մենք ունենք ստուգված նիւթ առնասարակ միջադեպերի մասին՝ Պետրոգրադի և Մոոլվայի նահանգներին վերաբերեալ: Ընդհանուր առնամբ, 1922 թ. առաջին կիսամեակում այդ նահանգներում գործադուների թիվը կազմում է ընդամենը 39: Այլ խոսքերով՝ հազիվ թե միջադեպերի մի տոկոսը վերջանում է գործադուլով: Եվ հիրավի, բավական է տեսնել միջադեպերի վիճակագրութիւնը՝ համոզվելու համար, թե միութիւնները հարթում են դրանց, նոյնիսկ շատ դեպքերում գործը չհասցնելով աշխատանքի բաժանմունքներին կից գտնվող պաշտանական կոնֆլիկտային մասնաժողովներին:

Այսպես, առաջին կիսամեակում լուծվել են միջադեպեր միութիւնների կոնֆլիկտը, մասնաժողովներում—Մոոլվայում 76,6%, Պետրոգրադում 83,1%: Աշխ. Բաժ. կից գտնվող կոնֆլ. մասնաժողովներում—Մոոլվայում 23,4%, Պետրոգրադում 16,9%. Ծնդ ամին պետք են նկատել, թե գործադուների վորոշ մասը տեղի է ունենում արհ. միութիւնների սանկցիայով, այնպես վոր արհ. շարժման իրական վերահսկողութիւնը միջադեպերի նկատմամբ ավելի լրիվ է ներկայանում:

Միութիւնների տակտիկան՝ հարթելու միջադեպերը կոնֆլիկտային մարմնների միջոցով և վոչ թե աշխատանքները դադարեցնելով, տվեց չափազանց դրական հետևանքներ: Եթե մենք նայենք միջադեպերի հետևանքներին, կը համոզվենք, թե ձնշող մեծամասնութեամբ այն միջադեպերը, վորոնը բննվում են միութիւնների մարմնների մեջ կամ նրանց աջակցութեամբ՝ Աշխատկոմատի մարմններում, վերջանում են հոգուտ բանվորների:

<sup>\*)</sup> Ամեն մի մասնակցողի վրա կորել է բանվորական օր 1895—1917 թ.—5,6, 1921 թ.—3,8, 1922 թ.—2,1. Տես «Նիւթեր աշխատանքի վիճակագրութեան մասին», պրակ 1-ին, Սարումիլինի խմբ:

Վերջացան՝	Միջադեպերի %	Մասնակցողների %
Հոգուտ բանվորների լիովին	76,1	76,3
Հոգուտ բանվորների մասնակի	15,4	19,1
Բնդամենը հոգուտ	91,5	95,4
Բանվորների գեմ	8,5	4,6
Դրական լիովին	40,6	համար
» » մասնակի	39,7	%
Բացասական	19,7	%

Ուրիշ կերպ ասած՝ միջադեպերին մասնակցածների ընդհանուր թվի 4,6% ի համար միայն կոնֆլիկտային մասնաժողովներում կայացրած վճիռներն աննպաստ են: Իսկ բոլոր միջադեպերից <sup>3/4</sup>-ից ավելի են վերջացան բանվորների օգտին: Բոլորովին այլ պատկեր են տալիս առանց միութիւնների սանկցիայի ծագած գործադուների հետևանքները (73 գործադուլից այդ պատկերին վերաբերում են 63-ը), երբեմն էլ գործադուները տեղի են ունենում միութիւնն ավարի հակառակ (2 դեպք 73-ից): Այստեղ ստացվում են այսպիսի հետևանքներ.

Դրական լիովին մասնակցողների 40,6% համար

» » մասնակի

Բացասական

Այդպիսով մասնակցողների համարեա մի հինգերորդը լիակատար պարտութիւն կրեց: Իսկ գործադուլից հետո մասնակի բավարարութիւն ստացողների վերաբերմամբ վիճակագրութիւնն ընդգծում է, թէ „վերջին խմբակի թվումն են նաև այն գործադուները, վորոնց ժամանակ աշխատանքները վերակսելու րոպեին վորոնչ չի տրված բանվորներին, այլ միայն խոստացված է միջոցներ ձեռք առնել վարելու պարտքերը” <sup>\*)</sup>

Միանգամայն պարզ է, թե միութիւնների տակտիկան, վոր մշակվեց նոր ուղղութեան անցնելու ժամանակ և մեկ ու կես տարվա երկորդ կեսում ստուգից, գործնական աշխատանքի մեջ հանդիսանում է միակ կանոնավոր տակտիկան: Դրանով է բացարկվում այն գործերի թվի անումը, վորոնք բննվեցին կոնֆլիկտային մասնաժողովների մեջ ամսե ամիս:

Այսպիս, աշխատանքի 19 նահ. բաժանմունքներին ներկայացրին:

<sup>\*)</sup> „Նիւթեր աշխատանքի վիճակագրութեան մասին”, պրակ 14, էջ 71.

- 224 միջադեպ ապրիլին,  
358 " " մայիսին,  
497 " " հունիսին,  
549 " " հուլիսին:

Ի նկատի ունենալով այն բոլորը, Վ-րդ Համառուսական Համագումարը վորոշում կայացրեց, վոր պարզորեն ձեակերպում է արճ. շարժման վերաբերմունքը դեպի բանվորների շահերի պաշտպանութեան գործադուլային ձեր:

«Համագումարը նորից մատնանշում է, — ասված է տարիքային-տնտեսական աշխատանքի մասին ընդունված բանաձևի մեջ, — թե ներկա պարմաններում անօգուտ են գործադուները՝ իրեն մեթող, այն միջադեպերի լուծման համար, վորոնք ծագում են միութիւնների անդամների տնտեսական շահերի պաշտպանութեան հողի վրա: Միութիւնները պետք է օգտագործեն Խորհրդային պետութեան բանվորական օրենսդրութիւնը, ինչպէս նաև գոյութիւն ունեցող հաշտարար միջնորդ հաստատութիւնները՝ իրենց անդամների օգտին միջադեպերը անհամեմոտ արագ ու նորմալ ճանապարհով լուծելու նպատակով: Արճ. Միութ. Համառ. Կ. Խորհրդի 2-րդ պլենումի վորոշումներով հաշտառակած գործադուի ամեն մի հնարավոր դեպք պետք է արագ ու ճշտորեն առանձնակի քննութեան ենթարկվի, համապատասխան տնտեսութեան տվեալ ճիւղի հշանակութեան: Այդ պատճառով գործադուների հարցերը պետք ե քննվեն վոչ միայն տեղական շահերի, այլև բոլոր բանվորների տեսակետից: Այսուղից անհրաժեշտութիւն է բղխում տալ միութիւնների կննդրոնական վարչութիւններին այդ հարցերը լուծելու իրավունք: Այդ տակտիկան անշեղ գործադրելու համար՝ անհրաժեշտ է խսորին կանոնավորել գործադուները: Տարով Սրտադրական Միութիւնների Կ. վարչութիւններին գործադադուներին սանկցիա տալու և լիկվիդացիայի արտոնեալ իրավունքներ, Համագումարն անհրաժեշտ է համարում համակերպել գործադուներին վերաբերող հարցերը ամեն առանձին դեպում միջմիութեան համապատասխան կենդրոնական մարմնների հետ»:

«Համագումարն ընդգծում է, թե գործադուի հետևանքում վ՞շ միայն պետք է բավարարվեն բարձր մարմնների կամ կոնֆլիկտային մասնաժողովների ընդունած բանվորական պահանջները, այլև պետք ե պարտավորապես ուղղվեն համապատասխան պետական մարմնի աշխատանքի պակտութիւնները:

«Այն դեպքում, եթե գործադուլը բռնկվում է տարրերային կերպով կամ միութեան մարմնների կամքի հակառակ, արճ. միութիւնը պարտավոր է շուտով վերջ դնել գործադուլին՝ ինչպես բանվորների, այնպես էլ ժողովրդական տնտեսութեան օգտին»:

V

Միութիւնների աշխատանքը կազմակեպչական շինարարութեան, նաև տարիքային ու կոնֆլիկտային ասպարեզներում իրացր փոփոխութիւններ կրեց Արճ. Միութ. Վ-րդ Համագումարից հետո: Միութիւնների մասնակցութիւնը պետութեան պլանային մարմնների մեջ շարունակեց զարգանալ նորմալ: Նորմալ էր ընթանում միութիւնների աշխատանքը նաև իրենց անդամների կուլտուր-կրթական, հրատարակչութեան, արհեստակցական շարժման նոր աշխատավորներ պատրաստելու, աշխատանքի պաշտպանութեան և, վերջապես, սովոր դեմ մաքառելու ասպարեզներում:

Դրա հետեանքով՝ միութիւնների աշխատանքն այդ բոլոր ասպարեզներում այնպահ էլ բնորոշ չէ վերջին մեկ ու կես տարվա համար:

1921 և 1922 թ. թ. բեկման տարիներ էին ոռուսական արհեստակցական շարժման մեջ: Փոփոխութեան ենթարկվեցին արհեստակցական միութեան աշխատանքի բոլոր հիմնական ձեւերը: Եվ այն գործնական փորձառութեամբ, վոր կուտակվեց այդ ժամանակաշրջանում ու հաշվի առնվից Վ-րդ Համառուսական Համագումարում, լավագույն կերպով արդարացավ արհեստակցական քաղաքականութեան նոր ուղղութիւնը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0193097

ԳԻՒՆ Ե 35 ԿՈՂ. (ԶԵՐՎՈՒԵՑ)

4-ая тип. Полиграфотд. ВСНХ.

Главлит № 243

